ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ<< ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ>>ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀԱՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ22/15

ք.Վեդի «10» 10.2022 թ.

Վեդու համայնքը», ի դեմս համայնքի ղեկավար Գ.Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մոստովիկ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Բազիկյանի, որը գործում է Մոստովիկ ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքային, Եղեգնավան բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացույցային օր՝:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատունիրավունքունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպեսնաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին;

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 ՄինչևՊատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված քերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատունպարտավորէ՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունք նընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառունիրավունքունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքումՊատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետովնախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառունպարտավորէ՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 20տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին նձավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչնայլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալօրացուցայինգրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարությանօբյեկտիկոնսերվացմանանհրաժեշտությանդեպքում՝ իրմիջոցներովկատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 731օր : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Իր միջոցներով իրականացնել նախագծային փաստաթղթերով /շինարարության կազմակերպման/ նախատեսված լաբարատոր փորձարկումները

4. ԱՇԽԱՏԱՆՔԻՀԱՆՁՆՄԱՆԵՎԸՆԴՈՒՆՄԱՆԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման ակտագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _30_ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքնընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻԳԻՆԸԵՎՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 499000000 (չորս հարյուր իննսունինը միլիոն) ՀՀդրամ, կամ 83.766.667 (ութսուներեք միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀդրամը՝ ԱԱՀ-ով։ Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

6. ԿՈՂՄԵՐԻՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալօրացուցայինգրաֆիկը) նախատեսվածժամկետիպահպանմանհամար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրոամբողջհինգհարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետովնախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրոամբողջհինգտասնորդական) տոկոսիչափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերովնախատեսվածտույժը նտուգանքըհաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համարՊատվիրատուի նկատմամբյուրաքանչյուր ուշացվածաշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրոամբողջհինգհարյուրերրորդական) տոկոսիչափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրումՀՀօրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերին (կամ)տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻՈՒԺԻԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո,

նորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականնարտակարգությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնիրավունքունիլուծելպայմանագիրը՝ այդմասիննախապեստեղյակպահելովմյուսկողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերիս տորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրիցծագած՝ կողմիվճարայինպարտավորությունըչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝ հակընդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

ների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը լուծելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 ՊայմանագրիհետկապվածվեճերընենթակաենքննությանՀայաստանիՀանրապետությանդատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմեր ի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսան ապայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմինտրվումէմեկականօրինակ:Սույնպայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվումենպայմանագրիանբաժանելիմասը:

8.12Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ

որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վեդու համայնքապետարան	<<ՄՈՍՏՈՎԻԿ>> ՍՊԸ
Ք.Վեդի Թումանյան 6	Արարատի մարզ գ. Այնթապ Երևան-Մեղրի
ՀՀՖինանսներինախարարություն	մայրուղի 16
Հ/Հ 900 422 102 237	<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աղասյան մ/ճ
ՀՎՀՀ 04241258	Հ/հ 2474602573110010
ՀամայնքիղեկավարԳ.Սարգսյան	ՀՎՀՀ 03807605
	Տնօրեն՝ Ա. Բազիկյան
----------	----------
ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելվածթիվ 1
«10» *10.2022 թ. կնքված*
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքային, Եղեգնավան, Փոքր Վեդի և Լուսաշող բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների>>սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքների

N N	Ծ ի ֆ ր .ն ո ր մ ա տ ի վ ի հ ա մ ա ր ը	Աշ խ ա տ ա ն ք ն ե ր ի ,ծ ա խ ս ե ր ի ա ն վ ա ն ա ւ մ ը և չ ա փ մ ա ն մ ի ա վ ո ր ը	չ ա փ մ ա ն մ ի ա վ ո ր	Ք ա ն ա կ ը	Ընդ հ ա ն ու ր ի ար ժ ե ք ը մ ի ա վ ո ր ի հ ա մ ա ր /հ ազ ար դ ր ամ/	Ընդ հ ա ն ու ր ի ար ժ ե ք ը /հ ազ .դ ր ամ/
1	1	2	3	4		6
		I. Հ ո ղ ա յ ի ն աշ խ ա տ ա ն ք ն ե ր				
1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդեզերով 20մ լիցք	1000մ3	0.0403	449,461	18,11
2	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում, տեղափոխում 20մ բուլդեզերով	1000մ3	2.1967	449,461	987,33
3	E1-1582	Բարձում էքսկավատորով 1,0մ3շերեփի տարողությամբ ավտոինքնաթափեր	1000մ3	2,197	629,969	1384,04
4	Ծ ու կ ա	տեղափոխում լցակույտ 2.0կմ	տ	3954,06	0,245	968,74
5	E1-1130	Հ ո ղ ա յ ի ն պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	86,67	1,480	128,27
		II. Ե ր թ ևեկելի մաս				
6	E27-20	Ավազակոպճային շերտիմիջ =10սմ	մ3	866,75	5,872	5089,56
7	E27-43	Խճավազային հիմք h=15սմ	100մ2	86,68	146,396	12689,61
8	E27-251 63-1	Բիտումի լցաբաշխում 4.12տ/1000մ2/	տ	35,71	349,222	12470,72
9	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոնե h=5սմ ,,Բ,,տիպ	100մ2	86,675	418,605	36282,59
		III. Ի ջ ատեղեր				
10	E1-1623 E1-1630	Գոյություն ունեցող ճանապարհային հագուստի քանդում h=26սմ բուլդոզերով, տեղափոխում 20մ	1000մ3	0,0287	449,461	12,90
11	E1-1582	Բարձում էքսկավատորով 1,0մ3շերեփի տարողությամբ ավտոինքնաթափեր	1000մ3	0,029	629,969	18,27
12	Ծ ու կ ա	Տեղափոխում լցակույտ 2.0կմ	տ	55,90	0,270	15,09
13	E1-1130	Հ ո ղ ա յ ի ն պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	1,05	1,480	1,55
14	E27-20	Ավազակոպճային շերտիմիջ =10սմ	մ3	10,50	5,872	61,66
15	E27-43 E27-43-1	Խճային հիմք h=12սմ	100մ2	1,05	127,08	133,43
16	E22-74 գ=0.6	Բիտումի լցաբաշխում 4.12տ/1000մ2/	տ	0,43	349,22	151,21
17	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոնե h=4սմ ,,Բ,,տիպ	100մ2	1,05	339,25	356,21
		IV. Կ ո ղ ն ա կ ն ե ր				
18	E27-20	Կողնակների իրականացում ավազակոպճից հիմիջ =10սմ	մ3	200,90	5,87	1179,68
		V. Ջ ր թ ո ղ խ ո ղ ո վ ա կ ն ե ր ի կ ա ռ ու ց ու մ				
19	E22-74	Գոյություն ունեցող d=530մմ խողովակների ապամոնտաժում	գծ.մ	42,00	1,68	70,43
20	E1-1582	Բարձում էքսկավատորով 1,0մ3շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0,095	629,97	59,85
21	Ծ ու կ ա	Տեղափոխում լցակույտ 2,0կմ	տ	5,39	0,25	1,32
22	E1-1546	IV կարգի գրունտում փոսորակի փորում խողովակի համար, խրամուղու երկայնքով	1000մ3	0,016	554,51	8,87

		կուտակումով				
23	1-1641	IV կարգի գրունտի հետլիցքախտացումով	1000մ3	0,009	53,35	0,48
24	E1-1587	IV կարգի ավելորդ գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1.0մ3)	1000մ3	0,007	537,28	3,76
25	Շուկա	Տեղափոխում լցակույտ 2,0կմ	տ	12,24	0,82	10,01
26	E23-1	Ավազակոպճային շերտխողովակների տակ h=10սմ	մ3	2,800	6,17	17,26
27	E22-74	Մետաղական խողովակի տեղադրում d=530մմ 1գծ.մ=128.240կգ: d=10մմ	գծ.մ	10,000	90,58	905,81
28	E22-72	Մետաղական խողովակի տեղադրում d=325մմ 1գծ.մ=47.202կգ: d=6մմ	գծ.մ	21,000	34,32	720,80
29	E30-230	Մետաղական խողովակի մուտքի և ելքի գլխամասերի կառուցում B15 դասի միաձույլ բետոնից	մ3	2,000	71,44	142,87
30	E8-27	Քսվածքային ջրամեկուսացում	մ2	76,10	1,24	94,59
		V. Դիտահորեր (6հատ)				
31	E7-762	Դիտահորերի սալի ապամոնտաժում	հատ	6,00	3,66	21,98
32	E46-82	Դիտահորերի իջեցման համար ե/բքանդում հարվածահատ մուրճով, միջինը 10սմ հաստությամբ	մ3	1,30	25,75	33,47
33	E11-11	Դիտահորերի կտրված մասի հավասարեցում բետոնե շաղախով, միջինը3սմ հաստությամբ	մ3	0,43	47,23	20,31
34	Գն.3 կ.35	Ծին աղբի բարձում ավտոինքնաթափ	տ	1,73	4,75	8,21
35	C310-5	Ծին աղբի տեղափոխում լցակույտ 2.0կմ	տ	1,728	0,25	0,42
36	E6-90-4	Չարենցի փողոցի ԿՄ0+164 դիտահորի պատի բետոնացում B15 դասի միաձույլ բետոնից	մ3	0,750	51,93	38,95
36	E7-762	Նոր դիտահորերի սալի տեղադրում 1200*1200 չափերի	հատ	6,00	160,021	960,13
37	E7-762	Կոյուղու դիտահորի կափարիչ, d=530մմ	հատ	6,00	57,672	346,03
		VII. Գյուտեխնիկայի անցման սալի կառուցում				
38	E27-20	Ավազակոպճային շերտ հիմիջ =10սմ	մ3	2,40	5,872	14,09
39	E1-1546	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով (1.0մ3),շերեփի տարողությամբ բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0,013	554,51	7,21
40	Շուկա	Տեղափոխում լցակույտ 2.0կմ	տ	23,64	0,25	5,79
41	E6-3-4	Հիմքերի միաձույլ բետոն B=15	մ3	7,68	69,57	534,31
42	E6-173-4	Սալի միաձույլ բետոնե ծածկ B=20	մ3	6,72	64,18	431,30
43	Շուկա	Ամրան AIII O14	տ	0,28	527,340	147,13
44	Շուկա	Ամրան AIII O10	տ	0,028	598,79	16,77
45	Շուկա	Ամրան AIII O8	տ	0,04	634,92	26,03
		VIII.Կողային առուների մաքրում (Չարենցի փողոց)				
46	E1-1546	Ջրահեռացման առվի մետաղական կիսախողովակից շին աղբի մաքրում ձեռքով	100մ3	1,984	281,98	559,45
47	E1-1622 E1-1629	Կուտակում բուլդոզերով, տեղափոխելով 20մ	1000մ3	0,20	143,89	28,55
48	E1-1536	Բարձում էքսկավատորով (1.0մ3) շերեփի տարողությամբ ավտոինքնաթափեր	1000մ3	0,198	396,99	78,60
49	Շուկա	Տեղափոխում լցակույտ 2,0կմ	տ	367,04	0,25	89,92
		Ընդամենը			**77353,70**	
					338479,63	

		Ընդամենը նախահաշվով		**415833,333**
		ԱԱՀ	20%	**83166,667**
		Ընդամենը նախահաշվով		**499000,000**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Վեդի համայնքում:

Շինարարական աշխատանքների կատարման համար պահանջվող նվազագույն աշխատանքային ռեսուսների , տեխնիկական միջոցների, պահանջվող լիցենզիաների, շինարարության պայմանների, շինարարության ժամկետների, շինհրապարակի կազմկերպման և բեռնամբարձ մեքենաների օգտագործման, հիմնական շինարարական մեքենաքների և մեխանիզմների, մասնագիտական կազմի , ծավալների , ռեսուսների, աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանման մասին պահանջները ներկայացված են աշխատանքային նախագծում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀՖինանսներինախարարություն
Հ/Հ 900 422 102 237
ՀՎՀՀ 04241258
ՀամայնքիղեկավարԳ.Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՄՈՍՏՈՎԻԿ>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Այնթապ Երևան-Մեղրի
մայրուղի 16
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/հ 2474602573110010
ՀՎՀՀ 03807605
Տնօրեն Ա.Բ.ագի կ.ան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 2
«10» 10 . 2022 թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ22/15
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքներ իառանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*ՀՀ Արարատի մարզի Վեղի քաղաքային, Եղեգնաման, բնակավայրերի ասֆալտապատման աշխատանքներ*	Պայմանագրին կից համաձայնագրի կնքման օրից	120 օրացույցային օր
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեղու համայնքապետարան
Ք.Վեղի Թումանյան 6
ՀՀՖինանսներինախարարություն
Հ/Հ 900 422 102 237
ՀՎՀՀ 04241258
ՀամայնքիղեկավարԳ.Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՄՈՍՏՈՎԻԿ>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 16
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/հ 2474602573110010
ՀՎՀՀ 03807605
Տնօրեն՝ Ա. Բագիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
10» 10. 2022 թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ22/15

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներ իրականացնող անձի կողմից նախատեսված ցանկի դասակարգման (CPV)	անվանումը	աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187	ասֆալտապատման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %					

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամբողջականարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Քաղ.Վեդի Թումանյան 6
ՀՀՖինանսներինախարարություն
Հ/Հ 900 422 102 237
ՀՎՀՀ 04241258
ՀամայնքիղեկավարԳ.Սարգսյան

ստորագրություն
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՄՈՍՏՈՎԻԿ>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Այնթապ Երևան-Մեղրի
մայրուղի 16
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/հ 2474602573110010
ՀՎՀՀ 03807605
Տնօրեն Ա. Բազիկյան

ստորագրություն
Կ.Տ

Հավելվածթիվ 4
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՏԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրընդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն